# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆԱԴԱ (ՕՏՏԱՎԱ) 2019Թ. ՄԱՅԻՍԻ 28-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 2-Ը ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը**
   Էդուարդ Աղաջանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Օտտավա (Կանադա), 2019թ. մայիսի 29-31-ը

4. **Հրավիրող կողմը**

Կանադայի կառավարության Ֆինանսների և Թվային կառավարման նախարարություններ և Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության (ԲԿԳ) բարձր մակարդակի համաժողով

6. **Քննարկված թեմաները**

Հայաստանում ԲԿԳ շրջանակներում իրականացված բարեփոխումները և հեռահար զարգացման ուղղությունները՝ պետական կառավարման բարեփոխումների շրջանակներում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

մայիսի 29-ին՝

1. Հանդիպում ԱՋԲ Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչ Բարտլետ Էդեսի հետ
2. ԲԿԳ համաժողովի պաշտոնական բացում
3. Հանդիպում Միացյալ Թագավորության (ՄԹ) FMA ընկերության հիմնադիր, նախկին ՄԹ կառավարության աշխատակազմի ղեկավար Ֆրենսիս Մադի և ՄԹ թվային բարեփոխումների պետական գործակալության աշխատակիցների հետ

մայիսի 30-ին՝

1. Իրական սեփականատերերի բացահայտում (ԻՍԲ) նախաձեռնության բարձր մակարդակի հանդիպում
2. Պանել-քննարկում՝ ԲԿԳ գործընթացը Արևելյան գործընկերության շրջանակներում և Արևմտյան Բալկաններում
3. ԲԿԳ շրջանակներում Բաց արդարադատություն կլոր սեղան քննարկում:
4. Հանդիպում ՄԹ պառլամենտի անդամ, Հակակոռուպցիոն ծրագրի համակարգող Ջոն Փենրոսի հետ:

մայիսի 31-ին՝

1. Հանդիպում ԲԿԳ ղեկավարի տեղակալ Ջո Փավլի, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համակարգող Շրեյա Բասույի և ԲԿԳ կառավարող խորհրդի քաղհասարակության համանախագահ, Թափանցիկություն և կառավարում ծրագրի տնօրեն Ռոբին Հոդսի հետ
2. Հարցազրույց GovInsider պարբերականի գլխավոր խմբագիր Ջոշուա Չեմբրի հետ
3. Համաժողովի պաշտոնական փակում՝ կազմակերպված Կանադայի կառավարության կողմից

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

մայիսի 29-ին՝

**1.** ԱՋԲ Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչ Բարտլետ Էդեսի հետ քննարկեցինք ԱՋԲ կողմից Հայաստանում իրականացված հաջողված նախագծերի, կառավարության ընթացիկ տեսլականի և ԱՋԲ հետ առավել սերտ համագործակցության հետ կապված հարցերը:

**2.** ԲԿԳ համաժողովի պաշտոնական բացմանը ներկա էին ԲԿԳ 75 և ավել մասնակից երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական և քաղհասարակության ներկայացուվիչներ: Համաժողովը պաշտոնապես բացեց Կանադայի վարչապետ Ջասթին Տրյուդոն:

3. Միացյալ Թագավորության (ՄԹ) FMA ընկերության հիմնադիր, նախկին ՄԲ կառավարության աշխատակազմի ղեկավար Ֆրանսիս Մադի հետ հանդիպմանը քննարկեցինք ԲԿԳ գործընթացը Հայաստանում, պետական համակարգում կատարվող բարեփոխումների և Հայաստանի թվային օրակարգին առնչվող հարցեր: Ձեռք բերվեց պայմանավորվածություն էլեկտրոնային կառավարման ոլորտում Բրիտանական հաջողված փորձը ներկայացնելու և Հայաստան այց կազմակերպելու վերաբերյալ:

մայիսի 30-ին՝

1. Իրական սեփականատերերի բացահայտում (ԻՍԲ) նախաձեռնության բարձր մակարդակի հանդիպման նպատակն էր ԻՍԲ առաջատար երկրների խումբ ձևավորելը: Քննարկմանը մասնակցում էին տասնայկ և ավել երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր պատրաստակամ էին պայքարել ստվերում գործունեություն ծավալող անձանց, ակտիվների վերադարձի, միջազգային կոռուպցիոն և փողերի լվացման հանցավոր գործընթացների դեմ: Իմ ելույթում նշեցի, որ Հայաստանի կառավարությունը հաստատակամ է բարձրացնելու թափանցիկության մակարդակը պետեկան համակարգում, կառավարության գործունեությունը ավելի հաշվետու դարձնելու և լիարժեք իրականացնելու կոռուպցիայի դեմ պայքարը, հետևաբար՝ մեզ համար կարևոր է ԻՍԲ գործընթացի իրականացումը Հայաստանում:

2. Քննարկում ՝ ԲԿԳ գործընթացը Արևելյան գործընկերության շրջանակներում և Արևմտյան Բալկաններում: Հրավիրված խոսնակների շարքում էին Հյուսիսային Մակեդոնիայի Ինֆորմացիոն հասարակության և կառավարման նախարարը, Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը, Թրասփարենսի Ինթերնեյշնլ-Ուկրաինա, Վրաստանի Ինֆորմացիայի ազատության կենտրոն և Սերբիայի Քաղաքացիական նախաձեռնություն կազմակերպությունների ներկայացուցիչները:
Քննարկմանը մասնակցում էի, որպես խոսնակ և ներկայացնում այն բարեփոխումները, որոնք իրականացվել են Հայաստանում ԲԿԳ գործընթացի շրջանակներում: Ներկայացրեցի այն նորորարական գործիքները, որոնք օգնում են ամրապնդել ժողովրդավարությունը և առավել արդյունավետ կապ հաստատել հանրության հետ, քաղաքացիներին որոշումների կայացման

գործում մասնակից դարձնելու, ինչպես նաև 2018թ. Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության և այդ ընթացքում կիրառված տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակության մասին:

3. ԲԿԳ շրջանակներում Բաց արդարադատություն կլոր սեղան քննարկմանը ներկայացվեց Հայաստանում էլեկտրոնային գործիքների կիրառումը՝ Արդարադատության ոլորտը ավելի բաց դարձնելու և ծառայությունները ավելի հասանելի դարձնելու համար: Հանդիպման մասնակիցներն էին Ալբանիայի, Արգենտինայի, Կանադայի, Կոլումբիայի, Ինդոնեզիայի, Ղրղզստանի, Մարոկոյի Նիդեռլանդների, Հյուսիսային Մակեդոնիայի, Սենեգալի, Շրի Լանկայի և Թունիսի բարձրաստիճան ներկայացուցիչներ:

4. ՄԹ պառլամենտի անդամ, Հակակոռուպցիոն ծրագրի համակարգող Ջոն Փենրոսի հետ հանդիպմանը քննարկեցինք հակակոռուպցիոն բարեփոխումների օրակարգը Հայաստանում, դրանց մեթոդները և ԻՍԲ ուղղությամբ Հայաստանում իրականացվող առաջին քայլերը, որպես փորձնական ոլորտ ներկայացնելով Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկություն նախաձեռնության գործընթացը:

մայիսի 31-ին՝

1. ԲԿԳ նախաձեռնության ղեկավարի տեղակալ Ջո Փավլի, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համակարգող Շրեյա Բասույի և ԲԿԳ կառավարող խորհրդի քաղհասարակության համանախագահ, Թափանցիկություն և կառավարում ծրագրի տնօրեն Ռոբին Հոդսի հետ հանդիպմանը քննարկեցինք ԲԿԳ նախաձեռնության ուղղությամբ իրականացվող ծրագրերը, հատկապես նշելով մեր պատրաստակամությունը գործընթացի շրջանակները ընդլայնելու մինչև խորհրդարան և տեղային մակարդակ: Քննարկվեցին ԲԿԳ նախաձեռնությունը ինստիտուցիոնալ դարձնելու, նոր գործիքակազմ ներառելու և ԲԿԳ աջակից խմբի կողմից տեխնիկական աջակցություն ստանալու թեմաները:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

1. Պայմանավորվածություն ձեռք բերվեց ՄԹ FMA ընկերության հիմնադիր Ֆրենսիս Մադի և ՄԹ թվային բարեփոխումների պետական գործակալության աշխատակիցների միջև՝ այցելելու Հայաստան փոխհամագործակցության և փորձի փոխանակման համար:

2. ՄԹ պառլամենտի անդամ Ջոն Փենրոսի և ԻՍԲ փորձագետների հետ հանդիպմանը պայմանավորվեցինք բարձրաստիճան և փորձագիտական մակարդակներում կազմակերպել քննարկումներ և ձևավորել աշխատանքային օրակարգ՝ ուղղված ԻՍԲ ռեգիստրի ներդրմանը Հայաստանում:

3. ԲԿԳ ղեկավար կազմը հանդիպման ընթացքում ցանկություն հայտնեց սեպտեմբերին այցելել Հայաստան՝ ԲԿԳ բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ և հանդիպումներ անցկացնելու համար:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**06.06.2019թ.**